

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ստուգաթերթ N

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ (Դ)  
(ՏԳՏԴ խմբ. 2՝ ծածկագիր 01.5)

< \_\_ > \_\_\_\_\_ 201 թ.

_____	_____	_____
տեսչության տարածքային մարմնի անվանումը	հասցե	հեռախոս
_____		
ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն	
_____		
ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն	
_____		
ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն	
Ստուգման սկիզբ (ամսաթիվ)՝ _____	ավարտ՝ _____	
Տնտեսավարող սուբյեկտի անվանումը, կազմակերպա-իրավական տեսակը		ՀՎՀՀ
Տնտեսավարող սուբյեկտի հասցե		հեռախոս
Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ վստահված անձի ազգանուն, անուն, հայրանուն		հեռախոս
Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____		
_____ երբ է տրված _____		
Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ _____		
_____		

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ**

	Հարցեր	Այլ	Այլ	Այլ	Կշիռ 10 բալանի համակարգով	Հղումներ նորմատիվ իրավական ակտերին	Ստուգման տեսակը	Մեկնաբանություն
<b>I</b>	<b>Շենքերին, շինություններին, տարածքներին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ</b>							
1	Օբյեկտի տարածքը ապահովված է էլեկտրական լուսավորությամբ:				8	«1», գլուխ 3 կետ 18	2	
2	Շինարարական հիմնատարրերը մշակված են հրապաշտպան լուծույթով:				8	«1», գլուխ 3 կետ 27	1;2;3	
3	Սանդղաբազուկների տակ գտնվող տարածքները ազատ են՝ չեն օգտագործվում առարկաների պահման համար:				9	«1», գլուխ 3 կետ 31	2	
4	Բացառությամբ հատուկ նշանակության սենքերի մնացած լուսամուտները ազատ են:				8	«1», գլուխ 3 կետ 31	2	
5	Արտաքին հրշեջ սանդուղքները գտնվում են սարքին վիճակում:				9	«1», գլուխ 3 կետ 32	2	
6	Տանիքի պարագծով տեղակայված մետաղական ճաղաշարը գտնվում է սարքին վիճակում:				9	«1», գլուխ 3 կետ 32	2	
7	Գյուղատնտեսական կազմակերպության մինչև 18մ լայնությամբ շենքերը երկայնական մեկ կողմից ապահովված են հրշեջ ավտոմեքենաների մոտեցման ճանապարհներով:				9	«20», կետ 4.14	2	
<b>II</b>	<b>Հիմնական արտադրության օբյեկտներ</b>							
8	Կրակային ջեռուցումով անասնակերերի պատրաստման համար նախատեսված շինությունները անասուններ (թռչուններ) պահելու տեղերից առանձնացված են պատերով:				9	«1», գլուխ 19 կետ 224	2	
9	Գյուղատնտեսական մեքենաների արտանետման խողովակները կահավորված են կայծմարիչներով:				9	«1», գլուխ 19 կետ 225	2	
10	Շարժական անդրամանուշակագույն սարքավորումները գտնվում են վառողունակ նյութերից ոչ պակաս, քան 1 մետր հեռավորության վրա:				9	«1», գլուխ 19 կետ 228	2	
11	Ճտանոցների էլեկտրատաքացուցիչների և անդրամանուշակագույն սարքավորումների սնման էլեկտրալարերը տեղադրված են հատակից ոչ պակաս, քան 2,5մ բարձրության վրա:				9	«1», գլուխ 19 կետ 229	2	
12	Ճտանոցների էլեկտրատաքացուցիչների և անդրամանուշակագույն սարքավորումների				9	«1», գլուխ 19	2	

	անման էլեկտրալարերը տեղադրված են վառողունակ կառուցվածքներից ոչ պակաս, քան 20սմ հեռավորության վրա:					կետ 229		
<b>III</b>	<b>Գյուղատնտեսական արտադրանքի մշակում</b>							
13	Կալսման մեքենաների վրայի պայթապարպիչները գտնվում են սարքին վիճակում:				9	«1», գլուխ 20 կետ 233	2	
14	50տ/ժ-ից ավելի արտադրողությամբ էլեատորները կահավորված են ինքնաշխատ արգելակման սարքերով:				9	«1», գլուխ 20 կետ 234	2	
15	Բերքահավաքի մեքենաները կահավորված են հրդեհաշիջման սկզբնական միջոցներով:				9	«1», գլուխ 21 կետ 237	2	
16	Բերքահավաքի մեքենաները կահավորված են կայծմարիչներով:				9	«1», գլուխ 21 կետ 237	2	
17	Հացահատիկի դաշտերի եզրերը չորս մետր լայնությամբ հերկված են:				9	«1», գլուխ 21 կետ 239	2	
18	Ժամանակավոր դաշտակացարանները տեղադրված են կալատեղերից առնվազն 100մ հեռավորության վրա:				9	«1», գլուխ 21 կետ 241	2	
19	Կալատեղերի տարածքները ունեն 4մ. լայնությամբ հերկված շերտեր:				9	«1», գլուխ 21 կետ 241	2	
20	Հնձած արտերի մնացորդների այրումը դաշտերում բացառված է:				10	«1», գլուխ 21 կետ 243	2	
21	Հացահատիկի կալատեղերը նախատեսված են շինություններից ոչ պակաս, քան 50 մետր հեռավորության վրա:				9	«1», գլուխ 21 կետ 244	2	
22	Հացահատիկային գանգվածներից ոչ պակաս, քան 100 մետր հեռավորության վրա:				9	«1», գլուխ 21 կետ 244	2	
<b>IV</b>	<b>Վիտամինային խոտի այլուրի պատրաստում և պահում</b>							
23	Վիտամինային խոտի պատրաստման ագրեգատները տեղադրված են շինություններում կամ ծածկարանների տակ:				9	«1», գլուխ 22 կետ 247	2	
24	Խոտի այլուրի պատրաստման շինությունների և վառելիքաքսանյութերով ցիստեռնների միջև պահպանված են ոչ պակաս, քան 50 մետր հակահրդեհային միջտարածություն:				9	«1», գլուխ 22 կետ 248	2	
25	Վառելիքի ծախսման բաքը տեղադրված է ագրեգատի շինություններից դուրս:				9	«1», գլուխ 22 կետ 249	2	
<b>V</b>	<b>Տեխնիկական կուլտուրաների նախնական մշակում</b>							
26	Տեխնիկական կուլտուրաների մշակման կետի				9	«1»,	2	

	տարածքում ծխելու տեղերը նախատեսված են շինություններից ոչ պակաս, քան 30 մետր հեռավորության վրա:					գլուխ 23 կետ 257		
27	Տեխնիկական կուլտուրաների նախնական մշակման շենքերի տանիքները չայրվող նյութերից են:				9	«1», գլուխ 23 կետ 258	2	
28	Արտադրական շենքերում տեղադրված չորանոցները այլ շինություններից առանձնացված են պատերով:				9	«1», գլուխ 23 կետ 260	2	
29	Ծխախոտի չորանոցների դարակաշարերը և հարկաշարերը չայրվող նյութերից են:				9	«1», գլուխ 23 կետ 262	2	
<b>VI</b>	<b>Տարահանման ճանապարհներ</b>							
30	Տարահանման ճանապարհների պատերը և առաստաղները երեսապատված են չայրվող շինանյութով:				9	«1», գլուխ 3 կետ 41	2	
31	Տարահանման ճանապարհները ազատ են՝ ապահովված է մարդկանց անարգել տեղաշարժը:				9	«1», գլուխ 3 կետ 41	2	
32	Տարահանման ելքերի դռները բացվում են շենքից դուրս գալու ուղղությամբ:				9	«5», կետ 6.17	2	
<b>VII</b>	<b>Էլեկտրասարքավորումներին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ</b>							
33	Հրդեհավտանգ հիմնատարրերով տանիքների վրայով օդային էլեկտրահաղորդման գծեր անցկացված չեն:				10	«1», գլուխ 4 կետ 47	2	
34	Էլեկտրաբաշխիչ վահանակները կահավորված են գործարանային արտադրության ապահովիչներով:				9	«1», գլուխ 4 կետ 48	2	
35	Լուսավորության շղթաների սնման և կառավարման մալուխների անցուղիները առանձնացված են:				9	«1», գլուխ 4 կետ 49	2	
36	Օգտագործվում են պահպանիչ ցանցերով և ճկուն հաղորդագծերով շարժական էլեկտրալուսատուներ:				9	«1», գլուխ 4 կետ 51	2	
37	Լուսատուներից մինչև այրվող նյութից պատրաստված կառուցվածքները և իրերը պահպանված է ոչ պակաս քան 0,5 մ հեռավորություն:				10	«1», գլուխ 4, կետ 52	2	
<b>VIII</b>	<b>Ջեռուցման և օդափոխման համակարգերին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ</b>							
38	Ջեռուցման համար օգտագործվում են գործարանային արտադրության սարքեր:				9	«1», գլուխ 5 կետ 57	2	
39	Կաթսայատներում հեղուկ վառելանյութ պահեստավորված չէ:				8	«1», գլուխ 5 կետ 61	2	
40	Վառարանային ջեռուցման ժամանակ օգտագործվում են ծխահեռացման համար				8	«1», գլուխ 5	2	

	նախատեսված անցուղիները:					կետ 62		
41	Օդափոխիչ համակարգի ինքնաշխատ անջատման սարքավորումները գտնվում են սարքին վիճակում:				8	«1», գլուխ 5 կետ 68	2	
<b>IX</b>	<b>Հակահրդեհային ջրամատակարարման ցանցեր</b>							
42	500 մ <sup>3</sup> -ից ավելի ծավալով պահեստային շենքերը սարքավորված են հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով:				9	«8», կետ 6.1	2	
43	Շինություններին (այդ թվում նաև հակահրդեհային ջրամատակարարման աղբյուրներին) հրշեջ փրկարարական ուժերի և միջոցների մոտեցումը ստուգվողի կողմից փակված չէ:				10	«5», կետ 8.14	2	
44	25000 մ <sup>3</sup> և ավելի ծավալով շինությունների արտաքին հրդեհաշիջման համար նախատեսված է ոչ պակաս քան 2 հրշեջ հիդրանտ:				10	«7», կետ 8.16	2	
45	Հիդրանտների տեղակայման համար նախատեսված ջրագծի տրամագիծը փոքր չէ 100 մմ-ից:				10	«7», կետ 8.46	2	
<b>X</b>	<b>Հրդեհի ազդանշանման և հրդեհաշիջման համակարգեր</b>							
46	Կախված մակերեսի չափերից գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները սարքավորված են հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերով:				9	«1», գլուխ 7 կետ 81	2	I*
47	Կախված մակերեսի չափերից գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները սարքավորված են հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով:				9	«1», գլուխ 7 կետ 81	2	I*
48	Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը փոխանցվում է լիազոր մարմնին:				9	«1», գլուխ 7 կետ 81	2	
49	3000 մ <sup>2</sup> և ավելի մակերեսով տարածք ունեցող գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը փոխանցվում է ոստիկանապի միջոցով:				9	«1», գլուխ 7 կետ 81	2	
50	Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը գտնվում են սարքին վիճակում:				9	«1», գլուխ 7 կետ 100	2	
<b>XI</b>	<b>Հրդեհաշիջման սկզբնական միջոցներ</b>							
51	Օբյեկտն ապահովված է հրդեհաշիջման սկզբնական միջոցներով:				10	«1», բաժին VIII կետ 504	1;2	II*
52	Կրակմարիչները տեղադրված են հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի				9	«1», բաժին	2	

	հեռավորության վրա:					VIII կետ 512		
53	Առկա է արտադրական վտանգավոր օբյեկտը արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման վկայականը:				9	«9», հոդված 19 կետ ժդ	1	
54	Արտադրական վտանգավոր օբյեկտում առկա է տեխնիկական անվտանգության ամենամյա փորձաքննության դրական եզրակացություն:				9	«9», հոդված 19 կետ ժբ	1	

Ծանոթություն: Նախավերջին սյունակում 1- փաստաթղթային ստուգում:  
2- ակնադիտարկում:  
3- լաբարատոր ստուգում:

Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա.

1 – ՀԱԿ- «Հրդեհային անվտանգության կանոններ» - հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի թիվ 263 հրամանով, հավելված 1:

5 – ՀՀՇՆ II-8.04.01-97 «Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն»:

7 – ՍՆԻՊ 2.04.02-84\* «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառույցներ»:

8 – ՍՆԻՊ 2.04.01-85 «Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի»:

9 – «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք ընդունված է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին:

20 – ՍՆԻՊ II-97-76 «Գլխավոր հատակագծեր գյուղատնտեսական ձեռնարկությունների»:

I\*- Հրդեհաշիջման և հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով օբյեկտների համալրման չափանիշներն են.

Պահպանվող օբյեկտների տեսակը	Պահանջվող համակարգեր	
Շենքեր	ՀՀԱԻԿ	ՀՏԱԻՀ և ՀՏԱՓԻՀ
	Նորմատիվ ցուցանիշներ	
1. Այրելի պոլիմերային ջերմամեկուսիչներով և մետաղական թեթև կառուցատարրերով միահարկ շենքեր		
1.1. Վարչա-կենցաղային նշանակության	1200 մ <sup>2</sup> և ավելի	1200 մ <sup>2</sup> -ից պակաս
2. Հացահատիկի պահպանման և վերամշակման համար շենքեր և շինություններ	-----	Անկախ մակերեսից և հարկայնությունից
2.1. Հացաթխման, հացաբուլկեղենի արտադրամասեր	-----	Անկախ մակերեսից
3. Բրդի, մորթու և դրանից պատրաստված արտադրատեսակների, այրելի հիմքով ֆոտո, կինո, ձայնագրման ժապավենների պահպանման	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից

համար		
4. Հրդեհային վտանգավորության Վ1 կատեգորիայի (բացառությամբ սենքերի, որոնք տեղակայված են հացահատիկի պահպանման և վերամշակման շենքերում և շինություններում), դրանք հարկերում տեղակայման դեպքում.		
4.1. Նկուղային և կիսանկուղային հարկերում	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
4.2. Վերգետնյա հարկերում (բացառությամբ 35-42 կետերում թվարկվածների)	300մ <sup>2</sup> և ավելի	300մ <sup>2</sup> -ից պակաս
5. Հրդեհային վտանգավորության Վ2-Վ3 կատեգորիայի (բացառությամբ սույն հավելվածի 10-18 կետերում թվարկվածների և սենքերի, որոնք տեղակայված են հացահատիկի պահպանման և վերամշակման շենքերում և շինություններում), դրանք հարկերում տեղակայման դեպքում.		
5.1. Նկուղային և կիսանկուղային հարկերում		
ա) Անմիջապես դեպի դուրս ելքեր չունեցող	300մ <sup>2</sup> և ավելի	300մ <sup>2</sup> -ից պակաս
բ) Անմիջապես դեպի դուրս ելքերի առկայության դեպքում	700մ <sup>2</sup> և ավելի	700մ <sup>2</sup> -ից պակաս
5.2. Վերգետնյա հարկերում	1000մ <sup>2</sup> և ավելի	1000մ <sup>2</sup> -ից պակաս
6. Այլ վարչական և հասարակական նշանակության սենքեր, այդ թվում կցակառուցված և ներկառուցված	-----	Անկախ մակերեսից

II\*- Շենքերը և շինությունները ձեռքի կրակմարիչներով ապահովելու չափանիշները ներկայացված են ստորև ներկայացված աղյուսակներում.

N	Շինության կարգը	Պաշտպանվող սահմանային մակերեսը, մ <sup>2</sup>	Հրդեհի դասը	Փրփրային և ջրային կրակմարիչներ 10 և 100 տարողությամբ	Փոշային կրակմարիչներ տարողությամբ, և			Ֆրեոնային կրակմարիչներ 2(3) և տարողությամբ	Ածխաթթվային կրակմարիչներ, տարողությամբ և	
					2	5	10		2	5(8)
1	Ա.Բ.Վ. այրվող գազեր և հեղուկներ	200	A	2++	-	2+	1++	-	-	-
			B	4+	-	2+	1++	4+	-	-
			C	-	-	2+	1++	4+	-	-
			D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	-	2+	1++	-	-	2++
2	Վ	400	A	2++	4+	2+	1+	-	-	2+
			D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	-	2++	1+	2+	4+	2++
3	Գ	800	B	2+	-	2++	1+	-	-	-
			C	-	4+	2++	1+	-	-	-
4	Գ.Դ.	1800	A	2++	4+	2++	1+	-	-	-
			D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	2+	2++	1+	2+	4+	2++
5	Հասարակական շենքեր	800	A	4++	8+	4++	2+	-	-	4+
			E	-	-	4++	2+	4+	4+	2++

Սույն աղյուսակում ամրագրված՝ տարբեր դասերի հրդեհների մարման համար փոշային կրակմարիչները պետք է ունենան համապատասխան լիցքավորում, «A» դասի համար ABC(E) փոշի, «D» դասի համար՝ (D):

Սույն աղյուսակում.

ա) «++» նշանով նշված են օբյեկտների ապահովման համար առաջարկվող կրակմարիչները.

բ) «+» նշանով նշված են կրակմարիչներ, որոնց օգտագործումը թույլատրվում է առաջարկվող կրակմարիչների բացակայման և համապատասխան հիմնավորման դեպքում.

գ) «-» նշանով նշված են կրակմարիչներ, որոնցով չի թույլատրվում ապահովել օբյեկտները:

Շենքերը և շինություններն, ըստ մակերեսի, օդափրփրային, համակցված, փոշե, և ածխաթթվային կրակմարիչներով ապահովվում են համաձայն հետևյալ աղյուսակի.

N	Շինության կարգը	Պաշտպանվող սահմանային մակերեսը, մ <sup>2</sup>	Հրդեհի դասը	Օդափրփրային կրակմարիչներ (փրփուր)100 լ տարողությամբ	Համակցված կրակմարիչներ (փրփուր, փոշի) 100լ տարողությամբ	Փոշե կրակմարիչներ 100 լ. տարողությամբ	Ածխաթթվային կրակմարիչներ, տարողությամբ լ.	
							25	80
1	Ա,Բ,Վ (այրվող գազեր և հեղուկներ)	500	A	1++	1++	1++	-	-
			B	2+	1++	1++	-	-
			C	-	1+	1++	-	-
			D	-	-	1++	-	-
			E	-	-	2+	-	-
2	Գ (բացի այրվող գազերից և հեղուկներից)	800	A	1++	1++	1++	-	-
			D	2+	1++	1++	-	-
			C	-	1+	1++	-	-
			D	-	-	1++	-	-
			E	-	-	1+	-	-

Սույն աղյուսակում ամրագրված տարբեր դասերի հրդեհների օջախների հրդեհաշիջման համար փոշու և համակցված կրակմարիչները պետք է ունենան համապատասխան լիցքավորում.

1) «A» դասի համար՝ ABC(E) փոշի.

2) «B», «C» և «E» դասի համար՝ BC(E) կամ ABC(E) փոշի.

3) «D» դասի համար՝ D փոշի:

Սույն աղյուսակում.

ա) «++» նշանով նշված են օբյեկտների ապահովման համար առաջարկվող կրակմարիչները.

բ) «+» նշանով նշված են կրակմարիչներ, որոնց օգտագործումը թույլատրվում է առաջարկվող կրակմարիչների բացակայման և համապատասխան հիմնավորման դեպքում.

գ) «-» նշանով նշված են կրակմարիչներ, որոնցով չի թույլատրվում ապահովել օբյեկտները:



## ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻ

Սույն ստուգաթերթում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- 1) այրվող նյութ՝ ինքնուրույն, կրակի աղբյուրի հեռացումից հետո այրվող նյութ.
- 2) հակահրդեհային միջտարածություն՝ շինությունից դեպի հարևան շինություններ կրակի տարածումը կանխարգելելու նպատակով նախատեսված տարածություն
- 3) վառողունակ՝ այրունակ, այրվելու ունակություն ունեցող.
- 4) հրդեհաշիջման և հրդեհի ազդանշանման ինքնաշխատ կայանքներ (<<ԱԻԿ)>՝ նախատեսված են հրդեհաշիջման և հրդեհի վայրի հայտնաբերման համար.
- 5) հրդեհի տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգ (<ՏԱԻՀ)>՝ նախատեսված է հրդեհի տագնապի ազդարարման համար.
- 6) հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ համակարգ (<ՏԱՓԻՀ)>՝ նախատեսված է հրդեհի տագնապի ազդանշանը օբյեկտից կապի որևէ հնարավոր միջոցով լիազոր մարմնին հաղորդման համար.
- 7) լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն.
- 8) հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, արկղ ավազով, դույլ, բահ, կեռածող, կացին:
- 9) հատուկ նշանակության սենքեր՝ դրամարկղային, արխիվային, պահեստային սենքեր: